



130. ԶՄԱՀ ՉԸՍ ԽԱՐԻ

Գեղացիմ՝ տարին-տըսվերկու ամիս կուշտ փորով հաց շուտեմ,
ու բանի կէրթա՝ կաղթրտնա, ղուր կնիկ-նժկըններ չը կոնա պահեմ,
ձևոններ դերկընցու էրկինք:

— Ա՛ստված, կուշտ փորով հաց ե՞ք պտի ուտիմ:

է՛, աստծու շա՞տ հողն է, թե ֆլան մարդ ուր տնով-տեղով անո-
թի-անսվաղ է: Մարդ կը տեսնա՝ օր աստված չը լսեմ, գելնա, գող-
տուկ կը մտնա դրկեցի մառան, շալակ մե հաց կը գողնա, օր տանե
հմալ տեղ մե՝ ըալթի կուշտ ուտեմ, դառնա աստծուն փառք տա:

Մարդն է՝ կառնեմ գշալակ հաց, կէրթա մեկ զերգամի յեր, հաց
կը դնե ներքեմ, էն է հա՛, բրդուճ պտի տանե բերան, կը տեսնա մեկ
մե կը մտնա յեր: Մարդն աշալա զհաց կը քշե քարի մե յետեմ:

— Բարի օր,— կըսե անծանոթ:

— Բարին վըր քըզի,— կըսե մարդ:

— Յողա ի՞նչ կէնիս:

— Հե՛ն, հով տեղ է, ըսի քիչ մե ըռհաթնամ:

— Ուտելու բան կա՞ գումանքդի՛:

— Չէ՛, խուրբան, չկա՛:

— Սուտ կըսիս, ըպա էս բրդուճն ի՞նչ է:

Մարդու սուտ կը բովի:

— Օղո՞րդ է,— կըսե,— կա, հմա չըմ ի՛տա, իմ նժկըններուն չըմ
տովի, քը՞զի տամ:

¹ Հուլիս (Մ. Բ.),

- Խանե բրդուճ մե:
- Զըմ հտա:
- Օր ըսիմ՝ ո՛ն իմ, կիտաս:
- Ըսե սա՛նք, ո՛ն իս:
- Ծս քու ստեղծող աստվածն իմ:
- Հա՛յ քու տուն ավիրի, հա՛, աստվածն ի՛ս: Մկա յուհու շըմ հտա: Դու էն շի՛ս, օր հարուստ ու աղքատ է ստեղծի, հարուստին կօղորմաս, վըր աղքատներուն շիշկիս, իմ պես խեղճերուն շուր յըսօր կտոր մե հաց շըս տվի, էկեր իս՝ հերք չէ, հո՛ւքրմ լե կր բանցու: Մեռնիս՝ շըմ հտա:
- Աստված կր տեսնա՝ օր գեղացին քընց քար խայիմ է, ըղընե շան մաղ մըլե շը կռնա փրցու, կը թորկե կէրթա: Մարդ շունչ կը քաշե, գուղե դրդուճ տանե բերան, կր տեսնա՝ մեկ ուրիշ ներս մտավ, դբրդուճ կր դնե յետև:
- Բարի օր,— կըսե անծանոթ:
- Աստծու խեր ու բարին:
- Ճամպորդ իմ, քընց սարի փառանի գելն անոթի, ուտելու բան-ման կա՛ մոտդի:
- Կեր՝ կէրա պրծա:
- Ըպա էն բրդուճ յորի՛ն գրիր քու յետև:
- էն բրդուճն է ու է՛ն:
- Սուտ կըսիս: Օր յիմնաս՝ ո՛ն իմ, կիտաս:
- Աստծուց շը վախեցա, քը՛ղնե վախենամ: Հլա ըսե սա՛նք, ո՛ն իս:
- Ընձի մահ կըսին:
- Հա՛,— կըսե գեղացին,— վո՛լա ու բիլա՝ կիտամ: Դու քընց աստված զոր ու զորընդեղ իս, քըղնե ճշմարիտ չկա, քու աչքին մեկին հարուստ ու աղքատ, հալվոր ու ջըհել, խտրութեն շըս դնի մըշ մարդոց, ա՛ն ախպեր, թրդ քըղի հալալ էղնի քու բաժին:

